

Այս աւերակք Տըրդատակուռ գեղեցկաշէնն են Պառնոյ,
 Այս պերճքանդակք քարոզ կարդան մեր մեծութեանն անցելս .
 Այս գոռ շինուածք զայըս աշուցեալ հնութեանց խնդրակ պանդխտին
 Տան բարբառելնըմա թէ Հայք ըզվայելուցն ընտրէին .
 Աստ միւսիոնք , ձեք կորընթեանք աստ տեսանին և յոնեան ,
 Համայն յայտնի զաջողութիւն Ճարտար ձեռին թորգոմեան .
 Քաջդ իմ Տըրդատ երբ սիրելոյ քեռդ ըզԴառնին կառուցեր ,
 Համարէիր ըզՀայաստան այսպէս անշէն գոլ ուաւեր
 Եւ դու Ինի , յետին պարծանքդ Հայոց անկեալ կաս և դուն .
 Ինի միակ յոյս ուապաստան Բարդատունեան նոր գահուն ,
 Եւ դու կորեար ակն Արփիոյ երթեմն եղեալ դու ընտիր
 Որ ըզպատուերս շըրջակայից նուածեալ ազանց յըղէիր ,
 Դու որ գոռոզ և պերճքնայիր 'ի մէջ բազում քաղաքաց
 Աակս անհամար քոյ պալատանց և սիգածեմ արքունեաց .
 Յայնչափ փառաց հետք քո միայն յամօթ մեր , ո՛հ , մընացին ,
 Օի կոչեցաք ըզթընամիս մեք և զոսոխս իսկ ինքնին .
 Օխարդ , աւաղ , յայդքան փառաց շըքեղազարդ գահոյից
 Ի հոյլս իջեր դըժովսըմբեր և թաղծագին աղիտից : . . .
 Ո՛հ միանդամ գունդ ազգակցացս 'ի տըխուր վայրս եկեսցէ ,
 Եւ 'նդ ամօթոյն իւր նըշուակ հառաչելով 'ի սըրտէ
 Ուսցի քանի աղէտս անբոյժըս պատճառէ հայրենեաց
 Ինզուգութիւն սրտից 'ի ջան հասարակացըն բարեաց :

ՄՐԱԳԻՑՆ ՀԵՔԻՄԵՑ

Ա. ՌԱՖ . ՎԱՐԺ .

ԲՆԱԿԱՆ ԳԻՏՈՒԹԻՒՆ

ԲՆԱԿԱՆ ՊԱՏՄՈՒԹԻՒՆ

Ալբայ¹:

Այ զարմանալի կենդանին մէկէն
 կը Ճանչցուի իրեն զրահապատ ձեռ-
 վը , որով կարծես թէ երկու հաստ
 վահաններու մէջ լաւ մը գոցուած է ,
 ու միայն գլուխը վիզը՝ պոչն ու թա-
 թերը դուրս են , և սովորաբար ա-
 նոնք ալներս կրնայ քաշել ամփոփել :
 Ուրիշ կենդանիներ ալ կը գտնուին
 որ կունակնին ոսկրէ պատեան ունին ,
 բայց աս պատեանը իրենց մսին ու
 ոսկորներուն հետ այնպէս կպած չէ՝
 ինչպէս որ կրիայինը . վասն զի ասոր
 բոլոր ոսկորներն ու ջղերը իր պատե-
 նին հետ այնպէս կպած ու խառնուած

Են որ առանց զինքը սպաննելու չես
 կրնար պատենէն զատել : Արիաներ
 կան որ վզերնին չեն կրնար ներս քա-
 շել բայց շատ տեսակներուն վիզն ալ
 կը քաշուի ներս :

Կրիային գլուխը՝ մարմնոյն նայե-
 լով խիստ պզտիկ է , աշուշներն ալ
 թռչնոց աչուշներուն պէս իրեք հատ
 կոսպ ունին : Խոտ ու Ճախներ ուտե-
 լով կ'ապրի , բայց խիստ քիչ բան կ'ու-
 տէ , ու ամիսներով և ինչուան տարի-
 ներով ալ առանց բան մը ուտելու ապ-
 րածը տեսնուած է : Ծամելիքները
 խիստ ուժով են . այնպէս որ բան մը
 խաճնելու ըլլայ նէ , գրեթէ անկա-
 րելի կ'ըլլայ բերնեն քաշել հանելը :

¹ Լատ. Testudo. Գլ. Tortue. Իս. Tartaruga.
ՏԱ. Թարուալ. Գուլւ Կալ:

Հաւկիթները, որ հաստ կծեպ մը ունին, աւազի կամհողի մէջ կը թաղէ, ու հօն արևուն տաքութեամբը կը բացուին : Արուներն ընդհանրապէս էգերէն պղտիկ են, ու սովորաբար ասով կը ճանցուին որ իրենց փորուն տակի պատեանը քիչ մը աւելի ներս մտած է : Աւանքերնին խիստ երկայն է . հարիւր քսան տարի ապրողը շատ տեսնուած է, բայց ինչուան երկուհարիւր տարիէն աւելի ապրողներն ալ կը յիշուին :

Կրիային տեսակները շատ են, ու տարբեր տարբեր բնաւորութիւններ ու կազմուածքներ ունին . բայց գըլ խաւոր չորս ցեղ կը բաժնուի, այսինքն շամառային կամ ոստին, ձախնային, գետային ու ծռալային : — Քամաքային կրիային թաթերը կտրած ձեռքի կամոտքի կը նմանին՝ կլոր, ու հինգ հինգ հատ կարծ մատուցներ կամ ըղունկներ ունին առջեխները, ետեխններն ալ չորս չորս հատ : Ասոր տեսակներուն մէջ ամենէն հասարակը գեղնագոյն է ու գրեթէ տասը մատնաշափի մեծութեամբ : — Դախնային կամ լճային կրիաները աւելի շատւոր են, ցամաքայիններէն շուտ կը շարժին, ու թաթերնին այնպէս է որ ջրի մէջ ալ կրնան լողալ . ասոնց ալ պատեանը գրեթէ միակտուր է անոնց պէս, ու մսերնին կ'ուտուի : Ասոր մէկ տեսակը կայ Առյանայի մէջ որ հաթաճալակ' լսուի . պատեանը պըզտիկ է, վիզը երկայն, գլուխը խիստ ածեւ ու ագեղ, քիթն ալ պատիճի պէս : — Դատային կրիաներուն թաթերը աւելի յարմար են լողալու . ասոնք տաք երկիրներու գետերն ու լճերը կը գտնուին . Եղոսի մէջ մէկ տեսակը կայ որ կոկորդիլոսի մանր ձագերը կը ջարդէ . հիւսիսային Ամբրիայի գետերուն մէջ ալ մէկ ուրիշ տեսակը, որ խիստ կատաղի է ու միու շատ փափուկ :

Օսովային կրիաները ասոնց ամենէն ալ կը տարբերին իրենց թաթերուն տափակ ձեռքն ու իրենց ընաւորու-

թեամբը . ասոնք խիստ աղէկ կը լողան ծովուն մէջ, երբեմն ալ ծովուն երեսը պառկած կը կենան ու թերեւս կը քնանան : Արբեմն ինչուան իրեք չորս հարիւր մղն ցամաքէն հեռու ծովերուն մէջ կը գտնուին, և միայն հաւկիթ ձգելու համար ասոնց էգերը ցամաքը կ'ելլէն : Ասոնք այնպէս խոշոր կ'ըլլան որ ինչուան տասնըհինգ ստնաշափի շրջապատ ունեցող տեսնուած է, ու ինչուան հազար հինգ հարիւր ու հազար վեցհարիւր լիպրէ ծանրութիւն կ'ունենան : Տաք երկիրներու գրեթէ ամէն ծովերուն մէջ կը գտնուին, մանաւանդ Անթիլեան կղզիներուն քովերը . կը գտնուի նաև Անթերկրական ծովուն մէջ, բայց քիչ :

Օսովային կրիան գլխաւոր երկու տեսակ է . մէյմը կանաչ էրիայ՝ ըսուածը, մէյմըն ալղատենակուտա՞ը ըսուածը : Անթինին երկայնութիւնը ինչուան վեց կամ եօթն ստնաշափի կ'ըլլայ, ծանրութիւնն ալ ինչուան եօթը հարիւր կամ ութհարիւր լիպրէ . բայց սովորական մեծութիւնը չորս ստնաշափէն աւելի չէ, ծանրութիւնն ալ անոր համեմատ . մէկ կրիային մսովը ինչուան երեսուն հոգի կրնայ կշտանալ : Առնըկին վրայի պատեանը տասուիրեք կտոր գոյնզգոյն ոսկորէ է, ու առջեկի երկու թաթերուն վրայ երկերկու ճանկ ունի զօրաւոր : Ամեծ տեսակը սովորաբար այրեցած գոտիին տակն եղած ծովերուն մէջ ու գետերուն թերանները կը գտնուի . շատը մէկտեղ ծովային խոտերով կ'ապրի, ու կղզիներու և աւազուտներու մօտ անապատ տեղեր կը բնակի : Դարնան ատեն աս կրիան գիշերանց ծովափը կը քաշուի՝ ջրէն բաւական հեռաւորութեամբ, անանկ որ ծովու ջուրը սաստիկ բարձրացած ատենն ալ իրեն չհասնիր . հօն առջեկի թաթերովը փոս մը կը փորէ՝ ինչուան երկու ստնաշափի խորութեամբ,

1. գ.լ. Tortue franche.

2. Tortue imbricquée.



Արեայի ուսութանշան մէջ :

ու երկու հարիւր յիսունի չափ հաւ-
կիթ կ'ածէ մէջն ու աւազով անանկ
կը ծածկէ որ ամենեին յայտնի ըլ-
լար . տարին երկու անգամ հաւկիթ
կ'ածէ . և թէպէտ բնութեամբ շատ
վախկոտ է , բայց աս կերպովս ինք-
զինքը ամէն վտանգէ ապահով ու ա-
զատ կը կարծէ : Ի՞սանկ բազմածին
ըլլալով ըստ ինքեան պիտի շատնային .
բայց որովհետեւ ամէն տարի որսորդ-
ները թէ զիրենք կը բռնեն և թէ
հաւկիթնին կը վերցընեն , աս պատ-
ճառաւաւ չեն շատնար , հապա օրէ օր
ալ կը քիչնան : Հաւկիթները . որ
հաւու հաւկիթի չափ կան , արեւուն
սաստիկ տաքութեամբը քսան օրուան
մէջ կը բացուին . ու անոնց մէջէն

ձագերն ելածնուն պէս ծովը կը թա-
փին . քանի որ պղտիկ են՝ ուրիշ ամէն
կենդանեաց ձագերուն պէս ասոնք
ալ արագաշարժ են , ու քանի երթան
կը դանդաղնան : Ի՞նչի բերան շատ
նեղութիւն կը քաշեն ասոնք ջրին
խորն իջնելու . անոր համար շատն
ալ ջրին երեսը լողալով՝ ջրային թըրո-
չուններէն կը բռնուին , ջրին խորերն
ալ իջնողները մեծ ձկներուն կերա-
կուր կ'ըլլան , ասանկով մեծ մասեր-
նին կը ջնջուի : Բայց քանի որ կը
մեծնան՝ աւելի կրնան ձկներուն գէմ
դնել . մանաւանդ տարիէ մը վերջը
ձկներուն շատը չեն համարձակիր ա-
սոնց հետ կուռելու :

Ի՞ս կրիային վրայի պատենին ու-

կորները խիստ թափանցիկ կ'ըլլան ու գոյնզգոյն, բայց շատ բարակ ալ ըլլալիուն համար՝ այնչափ չեն դործածուիր՝ ինչպէս մէկալինը : Այսը շատ առողջարար ու զովացուցիչ է, մանաւանդ գէր եղած ատենը . զօրաւոր գեղ է բորի նման հիւանդութեանց դէմ, նաւորփներուն ալ շատ առողջարար, ու Այրոպայի մէջ քիչ գըտնուելուն համար ալ շատ յարգի է, մանաւանդ Խնդղիա, ուսկից նաւեր կ'երթան ինչուան հնդկաց ովկիանուր՝ միայն աս կրիան բռնելու, ու կը բերեն ողջ ողջ Ո սնտրա կը ծախեն ու մէծ վաստակ կ'ընեն :

Պատենակուռ ըսուած կրիան առջնին հասարակ տեսակէն քիչ մը աւելի մեծ է . սովորաբար երկու հարիւր լիպրէ կը կշռէ, թէպէտ երբեմն ինչուան չորսհարիւր լիպրէ ծանրութեամբն ալ գտնուած է կ'ըսեն : Ասոր կռնըկի պատեանն ալ տասուիրեք հատ մթնագոյն ոսկորէ է, բայց ասոր պատենին կտորները հաստ են, ու մէկալինին պէս քովիքովլշարուած ըլլալու տեղը՝ կղմինտրի շարուածքին նման իրարու վրայ շարուած են, անոր համար պատեակուռ ըսկնք անունը : Խոջի տեսակ կրիային գտնուած տեղերն աս ալ կը գտնուի, ու երկուքին ալ կերակուրը նոյն է . թէպէտ ասոր հաւկիթն աղէկ է, բայց միսը չուտուիր . ասոր պատենին ոսկորներէն կը շինեն զանազան տուփեր և ուրիշ դործիքներ ու զարդեր :

Օսպային կրիաներն որսալու համար այլեայլ կերպեր կան : Հնդկաց ծովերուն մէջ աս կերպս կը բանեցընեն . եքինեիս կամ նաւակալ ըսուած պզտիկ ձկան վրայ օղակ մը կը կապեն երկայն չուանի մը ծայրը, ու անանկ ծովուն մէջ կը ձգեն . ձուկը որպէս զի ճար մը գանէ ան չուանէն ազատելու, կ'երթայ կրիային փորը կը պառկեցընեն, որով անսնք որչափ ալ ուզեն՝ տեղերնէն չեն կրնար իւլրտելու . ետքը կը խսկուին մէկիկ մէկիկ չուաններով կապել ու առ ՚ի շեղ տախտակի մը վրային քաշքըշելով սայլերուն վրայ կը հանեն, և ողջ ողջ ինչուան չեւու երկիրներ կը տանին :

անանկ որ երբոր նաւավարները չուանը կը քաշեն՝ ձկան հետ մէկտեղ կը րիան ալ գուրս կուգայ : Այս կերպը թէպէտ զուարձալի է, բայց այնչափ չգործածուիր : Այրեմն ալ կէտ կամ պալէնա ըսուած ձկան պէս ծովուն երեսը լողալու ատենը Ճանկեր ձգելով կը բռնեն ու գուրս կը քաշեն . բայց ամենէն աւելի դիւրին կերպը՝ կրիաներուն ցամաք ելած ատենը բռնելն է : Այս կրիաներուն էգերը հաւկիթձգելու համար երբեմն ինչուան վեց կամ եօթնհարիւր մղօն տեղ կը հեռանան ծովէն, ու աս Ճամբորդութեանս մէջ իրենց համար աւազներուն մէջ լարուած չուանէ որոգայթներուն մէջ կ'իյնան : Այսնէն աւելի հոս գրուած պատկերին մէջ երեցած կերպովը լաւ կը յաջողի կրիային որսը, և պատկերը Վրուպա կղզւոյն աւազուտ ու անբնակ ծովափներէն մէկն է :

Որսորդները գիտնալով որ գարնան ատեն էգ կրիաները կ'երթան ցամաքը աւազներու մէջ հաւկիթնին թաղելու, որպէս զի դիւրութեամբ կարենան գործքերնին տեսնելու, պարզ ու լուսընկայ եղած գիշերներ կ'ընտրեն որսորդութիւննին ընելու : Խոջ պէս որ պատկերին մէջ ալ կը տեսնուի, որսորդները վրայ կը հասնին, կրիաները կռնըկի վրայ կը պառկեցընեն, որով անսնք որչափ ալ ուզեն՝ տեղերնէն չեն կրնար իւլրտելու . ետքը կը խսկուին մէկիկ մէկիկ չուաններով կապել ու առ ՚ի շեղ տախտակի մը վրային քաշքըշելով սայլերուն վրայ կը հանեն, և ողջ ողջ ինչուան չեւու երկիրներ կը տանին :

ՀԱՆԵԼՈՒԿ

Ընուշը ծախէ, գընովըն վախէ .
Գործածողն ոչ Ճանաչէ :

ՄԱՐՏԻ ՀԱՆԵԼՈՒԿԻՆ ԷՐ ԴԱՎՈՒԼ :